



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2021թ. թիվ 164-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐԻ «ՎԻԴԻՈՋԵՆՅԱ» ԹԻՎ 28 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 387-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 6-րդ կետը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի թիվ 17-Ն հրամանը, «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 26.02.2021թ. թիվ 15, ծնողական խորհրդի 26.02.2021թ. թիվ 4 և մանկավարժական խորհրդի 26.02.2021թ. թիվ 4 նիստերի արձանագրությունները՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» թիվ 28 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել Վահե Մելիքսեթյանի անունով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010թ. հոկտեմբերի 26-ի թիվ 387-Ա որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» թիվ 28 հիմնական դպրոց» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոց» բառերով:

3. Հաստատել կանոնադրության փոփոխությունը:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Բրուտյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

3/25/2021

X 

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

2021թ. մարտի 25
ք.Վանաձոր

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. մարտի 25-ի
թիվ 164-Ա որոշմամբ

Կազմված է «___» _____ 2021թ.
Բաղկացած է 1 էջից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 22.01.2003թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 26.210.02102
ՀՎՀՀ 06910161
_____ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ _____ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«___» _____ 2021թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ «ՎԻԴՐՈՋԵՆՅԱ» ԹԻՎ 28 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա»
թիվ 28 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության
կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

կանոնադրության մեջ բոլոր տեղերում «Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» թիվ 28 հիմնական դպրոց» բառերը
փոխարինել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Վահե
Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոց» բառերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է _____ գրանցված «Հայաստանի
Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» թիվ 28 հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի կանոնադրության անբաժանելի մասը: